

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԴՊՐՈՑ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա «Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը
դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան
բարձրացնելու միջոց»

Մասնակից

Արմինե Երջանիկի Կարապետյան

Դպրոց

ՄԱՍԷ Էօրնեկեան հանրակրթական դպրոց

Վերապատրաստող

Ավետիսյան Կարինե Հրանտի

Վաղարշապատ 2023

Բովանդակություն

1. Նախաբան.....	
.....	2
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը հանրակրթական դպրոցում	4
3. Հետազոտական համատեքստ.....	
.....	8
4. Գործնական համատեքստ.....	
.....	8
5. Հետազոտական ընթացք.....	
.....	10
6. Տվյալների վերլուծություն.....	մշակում և
.....	
.....	12
7. Ամփոփում.....	
.....	14

2

Նախաբան

Թեմայի արդիականությունը. 21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: SS ազդեցությունից անմասն չի մնում նաև կրթական համակարգը Նորագույն ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու ավանդական ուղիները Տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտներին նոր պահանջներ են ներկայացնում Նրանք հիմնական կարողություններից բացի պետք է ունենան ժամանակի պահանջին համապատասխան հմտություններ՝ համագործակցություն հաղորդակցում ստեղծագործական մտածողություն և այլն: Տեղեկատվական մշակույթում փոխվում է նաև ուսուցչի դերը. նա դառնում է տեղեկատվական հոսքի համակարգողը: Ուստի ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից մեթոդներին և կրթական նոր տեխնոլոգիաներին՝ երեխայի հետ նույն լեզվով հաղորդակցվելու համար: Արդի տեխնոլոգիաների ամենօրյա զարգացումը ներթափանցում է հասարակական կյանքի մի շարք ոլորտներ և նորանոր զարգացման հնարավորություններ ընձեռում մարդկության առաջընթացի համար: Կրթական

համակարգը մարդկության զարգացմանն ու ձեռքբերումներին համընթաց պետք է շարժվի և բաց լինի նոր մարտահրավերների առջև, ինչպիսիք են նաև թվային տեխնոլոգիաների մուտքը կրթության ասպարեզ, որը վերջինիս հարստացնում է **նոր** ու բազմապիսի գործիքներով:

Այսու մեր ընտրած թեման **արդիական** է, քանի որ թվային տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում ամենանորարար հարցերից է: Այսօր առանց դրա նույնիսկ կրթության զարգացումը պատկերացնել չի կարելի: Դրա բացառումը կրթության մեջ կարող է խզում առաջացնել անհատի սոցիալականացման ձևավորման համար, քանի որ իրականությունը շատ հաճախ պարտադրում է ժամանակին համընթաց քայլեր կատարել կրթության մեջ, ինչն օրինաչափ է: Թվային տեխնոլոգիաների կիրառությունը շատ մեծ հնարավորություն է տալիս առաջին հերթին սովորողին՝ ինֆորմացիայի տարատեսակ աղբյուրներին ծանոթանալու, դրանցից հմտորեն օգտվելու, կազմելու, ստեղծելու, ստեղծագործելու իմաստով, դասանյութն առավել պատկերավոր, հետաքրքիր, ու մատչելի հասկանալու առումներով: Հանրակրթական ուսումնական չափորոշիչների նոր, վերամշակված պահանջները

3

դարձյալ թվային տեխնոլոգիաների կիրառումը դիտարկում են որպես կրթությունը առավել որակյալ և բազմազան դարձնելու միջոց, և դրա կրառությանը մեծ տեղ են տալիս:

Հետազոտության թեմայի **ընտրությունը** կանգ է առել թվային տեխնոլոգիաների կիրառությանը դասավանդման ժամանակ, քանի որ կարծում ենք, որ թվային տեխնոլոգիաների ներառումը դասապրոցեսի մեջ, դասը կդարձնի առավել ինտերակտիվ, բազմաբնույթ, առավել պատկերավոր, առավել դյուրըմբռնելի:

Հետազոտության **նպատակն** է թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դասապրոցեսը դարձնել աշակերտակենտրոն, սովորողին ուղղորդել այնպես, որ գիտելիք ստանալուց և ինֆորմացվելուց բացի դառնա նաև ինքնուրույն հետազոտող, կառուցող, ստեղծագործող անհատ, ով թվային տեխնոլոգիաների կիրառումը կդարձնի միջոց մտածական կարողությունները զարգացնելու առումով, նաև նպատակ ենք դրել ընդգրկել դասարանի բոլոր աշակերտներին, նրանց տալ անհատական կամ խմբային առաջադրանքներ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Անժխտելի է մի իրողություն, որ մարդկային գիտական մտքի թերևս մեծագույն հայտնագործությունն են տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, որոնց կիրառումը մարդկային գործունեության տարաբնույթ ոլորտներում մեզ հանգեցնում է բազմաբնույթ և բազմազան հիմնախնդիրների լուծմանը: Ուստի այսօր մեր կրթահամակարգում ամենախիստ ձևով կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում: Այսօր կրթության հիմնական հեռանկարային նպատակը մեր ապագա սերնդին կյանքի և գործունեության համար նախապատրաստելն է: Կրթական համակարգը կոչված է ձևավորելու այնպիսի անհատներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելագործել ու զարգացնել հասարակությունը: Համացանցի օգտագործումը զգալիորեն բարձրացնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման ու յուրացման արդյունավետությունը: ՏՀՏ-ների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի

դերը: Նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրանաջակցող և գնահատող գործընկեր: Սովորաբար, երբ խոսում են կրթական համակարգ ներմուծվող տեխնոլոգիաների մասին, ավելի հաճախ նկատի են ունենում համակարգիչներն ու համացանցը: Պետք չէ մոռանալ նաև էլեկտրոնային փոստի, ձայնային և տեսագրված տեղեկատվության հաշվառման համակարգերի մասին, որոնք նույնպես կարող են արդյունավետորեն կիրառվել դպրոցում: ՏՀՏ-ները ուսուցման ընթացքը դարձնում են ավելի հետաքրքիր, բովանդակալից՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ժամանակին: ՏՀՏ-ն անհրաժեշտ է ժամանակակից դասին: Ակտիվ դասագործընթացում օգնական և մասնակից կարող է լինել աշակերտը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է դիտողականության բարձրացմանը, թույլ է տալիս գիտելիքների փոխանցման ժամանակ մեծացնել աշակերտի ուշադրությունը, հիշողությունը:

Այժմ դպրոցները ՏՀՏ-ի կիրառմամբ հնարավորություն են ստացել մատուցելու նոր տեղեկությունն այնպես, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական պահանջները: ՏՀՏ-ի կիրառմամբ աշակերտների կողմից կատարված հետաքրքիր և հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ակտիվորեն ներգրավել նրանց դասագործընթացի կազմակերպման մեջ

Այսպիսով, ՏՀՏ-ի ինտեգրումը ուսումնական գործընթացին անխուսափելի է և ունի դրական նշանակություն: Այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հաստատուն քայլերով մուտք է գործում դպրոց, դասարան, առարկաների դասավանդման գործընթաց, և այստեղ կարևորվում են այդ ամենի ճիշտ և գրագետ կիրառումը: Ուստի այստեղ էական է այն փաստը, որ աշակերտին մենք նախ պիտի սովորեցնենք ինքնուրույն սովորել, այն է՝ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հմտություններով պիտի զինենք, և շեշտենք մի կարևոր հանգամանք. ուսումնառությունը անընդհատ, հետաքրքիր, արդյունավետ, շարունակական գործընթաց է, և այն անհրաժեշտ է ողջ կյանքի ընթացքում: Շատ ուսուցիչների համար ակնհայտ է, որ համակարգիչը տարբեր առարկաների դասավանդման հուսալի օգնական և արդյունավետ ուսուցման գործիք է: Ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումը դասվում է նույն հատկանիշների շարքին, ինչպիսիք են կարդալու և գրելու ունակությունը: Նա, ով հմտորեն և արդյունավետ տիրապետում է տեղեկատվական տեխնոլոգիաներին, ունի մտածողության այլ, նոր ոճ և սկզբունքորեն այլ կերպ է մոտենում իր գործունեության կազմակերպմանը: Համակարգչի օգտագործումը ուսումնական գործընթացում հնարավորություն է տալիս ակտիվացնել ուսումնական գործընթացը, բարձրացնել դպրոցականների հետաքրքրությունը առարկան ուսումնասիրելու հարցում, իրականացնել կրթության զարգացման գաղափարներ, բարձրացնել դասի տեմպը, մեծացնել ինքնուրույն աշխատանքի ծավալը և էական ազդեցություն ունենալ աշակերտի հուզական ոլորտի վրա: Շատ կարևոր է, որ նրանք կարողանան ընտելանալ տեղեկատվական դարի գործիքներին: Դպրոցները պետք է բարձրացնեն իրենց արդյունավետությունը: Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են ազատել ուսուցչին՝ հնարավորություն տալով նրան խնայելու ժամանակը և ջանքերը ներդնել այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն, ուսումնական միջավայրի մշտական գնահատում ու բարելավում: Որպեսզի այս զարգացած դարում երեխաները իրենց ուսման ընթացքում լիարժեք կերպով օգտագործեն կրթական տեխնոլոգիայի հիմնական տարրերը, անհրաժեշտ է, որ մանկավարժները տիրապետեն համակարգչային գրագիտությանը: Վերջինս դպրոցում այն կենդանի մթնոլորտն ստեղծելու հիմնական պայմաններից մեկն է, որը սովորողների մեջ հետաքրքրություն է առաջացնում և պահպանում

համակարգչի նկատմամբ, խթանում է այն ստեղծագործաբար օգտագործելու ջանքերը:

Դասի ժամանակ SՏՏ-ի օգտագործումը բարձրացնում է սովորելու դրական մոտիվը, ակտիվացնում է սովորողների ճանաչողական գործունեությունը, զարգացնում է մտածողությունը, ձևավորում մտավոր գործունեության մեթոդները: Փորձը ցույց է տալիս, որ առանց նոր տեղեկատվական տեխնոլոգիաների այլևս հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից դպրոցը և ժամանակակից դասը: Ակնհայտ է, որ առաջիկա տասնամյակների ընթացքում անհատական համակարգիչների դերը կբարձրանա, և դրան համապատասխան՝ կբարձրանան աշակերտների համակարգչային գրագիտության պահանջները: Մեր մասնագիտական գործունեության մեջ մենք գործնականում օգտագործում ենք համակարգչի հնարավորությունները մի քանի ուղղություններով: Համակարգչի հետ ուղղակիորեն աշխատելու հիմունքների ուսուցում: Օգտագործում ենք համակարգչային կրթական խաղեր դասավանդման ընթացքում: Հետևում ենք աշակերտների կրթական գործունեության արդյունքներին: Մուլտիմեդիայի միջոցներն կարող են արդյունավետ աջակցել դասի խաղային ձևերին, աշակերտ-համակարգիչ ակտիվ երկխոսությանը: Դաս-շնորհանդեսի գործընթացում ակտիվ դերակատարումը պատկանում է ուսուցչին: Դասի հիմքը նոր նյութի ներկայացումն է, նկարագրություններով, պարզ անիմացիոն գծապատկերներով: Դասի համար նյութերի որոնումը կատարվում է նախապես: Բոլոր ընտրված նյութերը համատեղվում են, առավել հաճախ Power Point-ի օգնությամբ, ընդհանուր ներկայացման մեջ : Դասի ընթացքում նման ներկայացումը կարող է ցուցադրվել ինչպես մուլտիմեդիա պրոյեկտորի օգնությամբ, այնպես էլ առանձին համակարգիչներով: Համակարգչային (ծրագրավորված) ուսուցման առանձնահատկությունը սովորողների փուլ առ փուլ անկախ գործունեությունն է, որը նպաստում է ուսումնական գործընթացի ակտիվացմանը, ինչպես նաև հետադարձ կապի առկայությանը: «Քեզ կասեն՝ կհիշես, ցույց կտան՝ չես մոռանա, կանես՝ կհասկանաս», այս պնդումները ևս մեկ անգամ համոզում է մեզ կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու անհրաժեշտությունը: Այսպիսով, մեդիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման գործընթացը, թույլ են տալի ստեղծագործական զարգացմանը: Դպրոցը՝ որպես մշակույթի և գիտելիքի կրող, չի կարող այդ գործընթացից անմասն մնալ: Եվ խոսքը ոչ

միայն ծրագրում տեղեկատվական դասընթացների ներառման մասին է, այլ նաև մեծ մասամբ ուսուցման արդյունավետությունը բարելավելու համար ուսուցչի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման: Ներկա ժամանակները թելադրում են իրենց պայմանները, և իրեն ժամանակակից համարող ցանկացած մարդ պետք է մինիմում գիտելիքներ ունենա ՏՀՏ-ից օգտվելու համար, քանի որ հիմա անհնար է պատկերացնել ուսուցումն առանց նորագույն տեխնիկայի, առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման: Դրանց միջոցով կարելի է բազմազան ու բազմաբնույթ առաջադրանքներ կազմել, շնորհանդեսներ պատրաստել, դասերը, միջոցառումները, հանդիպումները հետաքրքիր ու բովանդակալից դարձնել: Յուրաքանչյուր ուսուցիչ և աշակերտ պետք է գիտակցի, որ ՏՀՏ – ի միջոցով կարելի է ստուգել գիտելիքը, ինքնակրթությամբ զբաղվել: Դասի անցկացումը մեղիայի շնորհիվ գրավում է դպրոցականներին:

Մեղիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.

- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- համակարգել ձեռք բերված գիտելիքները
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը լուծում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- բարձրացնել սովորողի մոտիվացիան
- բարձրացնել ուսման գործընթացի արդյունավետությունը
- նպաստել ուսանողների ճանաչողական ոլորտի ակտիվացմանը
- կատարելագործել դասավանդման մեթոդները
- պլանավորել և կազմակերպել աշխատանքը
- կիրառել որպես ինքնակրթության միջոց

ՏՀՏ-ի կիրառմամբ դասեր անցկացնելու պրակտիկան ցույց է տվել, որ շուսուցիչը խնայում է ուսուցման ժամանակի մինչև 30%-ը, հարստացնում այն նոր բովանդակությամբ: Վստահ ենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կարող է վերափոխել ավանդական կրթական առարկաների դասավանդումը՝ երեխաների հետաքրքրությունը սովորելու նկատմամբ հետևողականորեն բարձր մակարդակի հասցնելով

Հետազոտական համատեքստ

Իմ առջև խնդիր եմ դրել թվային տեխնոլոգիաների գործածությամբ դասն անցկացնել առավել ակտիվ, ներառել դասարանի բոլոր աշակերտներին, ուսումնասիրել կիրառաժամանակային մեթոդի կոնկրետ ազդեցությունը դասարանի արդյունավետության բարձրացմանը, առաջադիմության բարձրացմանը և եթե այն հաջողվի, այդ փորձը կիրառել նաև դասավանդաժամանակ շատ այլ դասարաններում ևս:

Ընտրել եմ VII^ա դասարանը: Ընտրությունը կանգ է առել «Վերածնունդ» թեմայի վրա: Թեմայի ընտրությունը պատահական չէ: Դասագրքի նյութը քիչ է, իսկ ինքը՝ թեման բազմաժամանակ և բազմաբովանդակ: Վերածնունդի շրջանի վերաբերյալ առավել ընդարձակ ինֆորմացիա տալու, ժամանակաշրջանի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու, ամբողջ դասարանը դասապրոցեսի մեջ ընդգրկելու համար փորձել եմ դասը կազմակերպել թվային տեխնոլոգիաների կիրառմամբ:

Նպատակիս հասնելու համար կատարելու եմ հետևյալ քայլերը.

- Օգտագործելու եմ մի շարք մեթոդներ դասի անցկացման համար
- Դասարանը բաժանելու եմ խմբերի, որպեսզի յուրաքանչյուրի անհատական աշխատանքը դիտարկեմ
- Դասանյութը ներկայացնելու եմ աշակերտները, հարցեր պատրաստելու եմ հիմնականում իրենք
- Դասի հետ առնչվող նյութերը փնտրելու և պատրաստելու եմ իրենք (եթե հարկ լինի, մի փոքր կուղղորդեմ)
- Մեղիագործիքներով աշխատելու եմ և դասերի բովանդակությանը համապատասխան նյութերով եմ հանդես գալու:

Գործնական համատեքստ

Տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են ժամանակակից հասարակությունների անբաժանելի մասը¹: Թվային տեխնոլոգիաների հաջող գործարկումը առաջարկվում է որպես տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին մասնակցելու կարևոր նախապայման (OECD, 2015): Covid-19 համաճարակը հետագայում ընդգծեց տեխնոլոգիայի կարևոր դերը մեր առօրյա կյանքում, հատկապես դպրոցներում դասավանդելու և սովորելու համար (Seufert, Guggemos, &

¹ Fraillon, Ainley, Schulz, & Friedman, 2014.

Sailer, 2021): Դպրոցները մեծ դեր են խաղում աշակերտներին տեխնոլոգիաները գիտակցաբար և պատասխանատվությամբ օգտագործելու մարտահրավերին նախապատրաստելու գործում: Տեխնոլոգիան ոչ միայն դռներ է բացում ժամանակակից հասարակություններում սոցիալական ներառման համար, այլ նաև առաջարկում է բազմազան հնարավորություններ ինչպես աշակերտների, այնպես էլ մանկավարժների համար՝ աջակցելու ուսուցման և սովորելու գործընթացներին:

Ուսուցիչների թվային հմտությունները , տեխնոլոգիական գիտելիքները, տեխնոլոգիական-մանկավարժական գիտելիքները, տեխնոլոգիական-բովանդակային գիտելիքները և տեխնոլոգիական-մանկավարժական-բովանդակային գիտելիքները անհրաժեշտ են տեխնոլոգիայով հաջող դասավանդման համար (Mishra & Koehler, 2006): Այժմ ավելի ու ավելի է ընդգծվում տեխնոլոգիայով դասավանդման տարբեր փուլերում խնդիրների լուծման հմտությունների գաղափարը (օրինակ՝ պլանավորում, իրականացում, գնահատում և փոխանակում) (տես Բավարիայի հետազոտական խումբ, 2017; Sailer et al., 2021)²: Նման մոտեցումները սահմանում են տեխնոլոգիայի հետ կապված ուսուցման հմտությունները՝ որպես գիտելիքների բազա՝ զուգորդված ուսուցման հմտությունների հետ: Նրանք պնդում են, որ տեխնոլոգիայի հետ կապված ուսուցման հմտությունները տեղին են կրթական գործունեության խթանման համար, որտեղ սովորողները ակտիվորեն օգտագործում են թվային տեխնոլոգիաները (Digital Campus of Bavaria հետազոտական խումբ, 2017): Վերջերս կատարված ուսումնասիրությունը շեշտում է, որ ուսուցիչների տեխնոլոգիայի հետ կապված ուսուցման հմտությունները ցույց են տալիս ամուր փոխհարաբերություններ թե աշակերտների, թե նաև աշակերտների ծնողների հետ: (Sailer et al., 2021):

Ինչպես փաստում է «PBS and Grunwald Associates» հետազոտական կազմակերպությունը ուսուցիչներն ավելի ու ավելի են գտնում առցանց ուսուցում և գիտելիքների փոխանակում հարթակներ, որոնք օգտակար կլինեն և դա կարող է լինել հնարավորություն տալով ուսուցիչներին ավելի արդյունավետ պատրաստվել դասերին և հարմարեցնել դասերն ու ուսուցման արդյունքները: Հետազոտությունը հայտնում է, որ հարցված ուսուցիչների 97%-ն օգտագործել է թվային մեդիա

² Ertmer & Ottenbreit-Leftwich, 2010; Zimmerman & Campillo, 2003.

ինտերակտիվ խաղերի, գործունեության որոնման և կառավարման համար, դասի պլաններ և սիմուլյացիաներ³:

Թվային տեխնոլոգիաների ուսուցումն ու ուսուցանումը կարող են օգնել 5-ից 18 տարեկան սովորողներին գիտակցել տարբեր ձևերով սովորելու հնարավորության, տեղեկատվության ավելի շատ աղբյուրների հասանելիության մասին: Նվաճումների բարձրացման առումով այս օգուտները ներառում են կարճաժամկետ արդյունքներ, ինչպիսիք են ուսուցման նկատմամբ վերահսկողության ավելի մեծ զգացում ունենալը և հմտությունը կիրառելու ավելի մեծ վստահություն, միջնաժամկետ արդյունքների միջոցով, ինչպիսիք են գիտելիքների և հմտությունների ավելի արագ ձեռքբերումը և բարելավված ազդեցությունները, դրա մասին է խոսում սովորողների առաջադիմության աճը, ովքեր հասել են ավելի բարձր արդյունքների քննությունների կամ թեստի լրացման ժամանակ, որտեղ օգտագործվել է թվային տեխնոլոգիա:

Գոյություն ունեն մի շարք հետազոտություններ, որոնք ուսումնասիրել են թվային գործիքների և ռեսուրսների ազդեցությունը երեխաների նվաճումների վրա մի շարք ոլորտներում: Օրինակ, Հարիսոնը, ով կրթության տեսաբաններից է և մի շարք այլ հետազոտողներ հայտնաբերել են վիճակագրորեն նշանակալի բացահայտումներ՝ դրականորեն կապելով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ավելի բարձր մակարդակները դպրոցական նվաճումների հետ, հետազոտությունը կատարվել է Անգլիայում, մի շարք առարկաների ուսուցման ժամանակ արձանագրել են դրական արդյունք տեխնոլոգիաների կիրառման և արդյունավետության ժամանակ⁴:

Հետազոտական ընթացք

Դասապրոցեսը կազմակերպելու համար դասարանը բաժանել ենք 4 խմբի:

Յուրաքանչյուր խումբ ստացել է իր թեման.

³ Literature Review on the Impact of Digital Technology on Learning and Teaching, <https://dera.ioe.ac.uk/24843/1/00489224.pdf>

⁴ Digital learning in schools: What does it take beyond digital technology? <https://www.sciencedirect.com/science/article/pii/S0742051X21000706>

1-ին խմբի թեման է «Վերածննդի առաջացումը և հիմնական գաղափարախոսությունը»

2-րդ խումբ՝ «Վերածննդի գրականությունը»

3-րդ խումբ՝ «Վերածննդի շրջանի իտալացի նշանավոր նկարիչներ»

4-րդ խումբ՝ «Հյուսիսային վերածնունդ»

Խմբերի հետ տարվել են ուղղորդող բնույթի նախնական աշխատանքներ, առաջարկվել են աղբյուրներ, կատարվել է աշխատանքի բաժանում: Իմ օգնությամբ ընտրել ենք խմբի աշխատանքը ներկայացնելու մեթոդը և այն մեղիագործիքը, որից կարող էին օգտվել:

Դասը սկսում ենք ապահովելով տեխնիկական բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են դասն անցկացնելու համար, այն է՝ համակարգիչ, պրոյեկտոր, դասին հատուկ դասասենյակի կահավորում, նաև տետրեր ու գրիչներ՝ գրառումներ կատարելու համար:

Առաջին խումբը հանգամանորեն ներկայացրեց Վերածննդի առաջացման պատմական և գաղափարական հիմքերը : Մասնավորապես ներկայացվեց որ, Վերածննդի գաղափարական հիմքը հռոմեական մարդասիրության տարբերակն էր՝ հիմնված դասական հունական փիլիսոփայության նոր բացահայտման վրա, Հաստատելով Պրոտագորասի ըմբռնումը, ըստ որի «Մարդը չափանիշն է բոլոր իրերի»: Այս նոր մտածողությունը դրսևորվեց արվեստի, ճարտարապետության, քաղաքականության, գիտության և գրականության մեջ: Խոսեցին նաև հումանիստների մասին: Առաջին խմբի անդամները ներկայացնելով վերը նշվածը, miro.com մեղիագործիքի օգնությամբ կատարեցին մտքերի քարտեզագրում՝ որին ակտիվորեն մասնակցեց ամբողջ դասարանը:

Երկրորդ խումբը Google Slides-ն էլեկտրոնային ցուցադրության գործիքի օգնությամբ պատրաստել էր շնորհանդես՝ ներկայացնելով «Ֆլորենցիայի երեք լուսատուներին»՝ Դանթե Ալիգիերիի, Ֆրանչեսկո Պետրրկայի, Ջովանի Բոկաչչոի գործունեությունը և աշխատությունները:

Երրորդ խումբը անդրադարձավ Վերածննդի ժամանակաշրջանի արվեստին՝ զարգացման ընդհանուր գծերին և հանգամանալից կանգ առան Վերածննդի երկու

խոշորագույն ներկայացուցիչների՝ Լեոնարդո դա Վինչիի և Միքելանջելոյի գործունեության վրա: նրանք classtools.net-ի 3D gallery գործիքի օգնությամբ հրաշալի ցուցադրություն կազմակերպեցին: Այնպիսի տպավորություն էր, որ գտնվում ես թանգարանում՝ որտեղ ցուցադրվում են այդ հանձարների գեղանկարները և քանդակները:

Չորրորդ խմբի անդամները ներկայացրին դասի իրենց հատվածը դարձյալ classtools.net -ի օգնությամբ: Ներկայացրին Էրազմ Ռոտերդամցուն, Ալբրեխտ Դյուրերին, Պիտեր Բրոյգել Ավագին և նրանց աշխատանքները:

Հանգամանորեն կանգ առան Թովմաս Մորի «Ուտոպիա» ստեղծագործության վրա: Ներկայացրին ստեղծագործությունը գրելու ժամանակը, Երբ Անգլիայում ոչխարաբուծության զարգացման համար գյուղացիներին քշում էին հողերից և մշակելի հողերը դարձնում արոտավայրեր:

Այնուհետև **breakingnews** մեդիագործիքի օգնությամբ տեղադրեցին մի տեղեկություն, համաձայն որի ասվում էր, **«Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»:** Խնդրեցին, որ դասարանը մեկնաբանի վերևում ասվածը: Աշակերտները բավականին լավ մեկնաբանեցին, անդրադարձան նաև հետևյալ հարցին. կարո՞ղ էր իրական լինել Մորի նկարագրած կղզին: Դասարանում ծավալվեց քննարկում բարձրացված հարցի շուրջ և հանգեցին այն կարծիքին, որ ստեղծագործության մեջ նկարագրված կղզին չէր կարող իրական լինել:

Տվյալների մշակում և վերլուծում

Այսպիսով, մեր կատարած ուսումնասիրության համար թիրախային խումբ էինք ընտրել VII^ա դասարանը: Փորձելով հասնել որոշակի չափելի արդյունքների: Մտավախություն ունեի ժամանակը ճիշտ կառավարելու, յուրաքանչյուր խմբերի աշխատանքը մնացած խմբերին հասանելի դարձնելու, խմբի մեջ աշխատանքը ճիշտ և հավասարաչափ բաշխելու և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ: Սակայն գլխավոր մտավախությունն իմ կողմից այն էր, որ չպետք է մեդիագործիքի դերը միայն իրենով համարել արդեն հաջող ու արդյունավետ դասի անցկացման համար, քանի որ դրա դերի գերազանահատումը կարող էր հակառակ էֆեկտն ունենալ դասի համար, դրանից կարող էր տուժել նաև դասարանը, որը կարող էր տարվել մեդիագործիքով աշխատելու իրենց համար հաճելի գործընթացին, բայց բովանդակությունը չհամապատասխաներ վերջինիս, կամ դրանց համընկնումը չլիներ և չունենայինք սպասելիք արդյունքը: Բայց և այնպես կարծում ենք, որ 2 դասի ընթացքում

կարողացանք մեծամասամբ դրական արդյունք ապահովել: Ճիշտ էր ընտրված դասարանը, քանի որ այս դասարանի աշակերտները բավականին կարգապահ են, գտնվում են քննադատական մտածողության ձևավորման որոշակի փուլում, սիրում են հարցեր տալ դասի իրենց համար դժվարըմբռնելի հատվածների դեպքում, պատասխանատու են և կատարում են հանձնարարված ցանկացած առաջադրանք: Մրա հետ զուգահեռ նաև նկատելի է այն, որ իրար հետ չեն կարողանում համագործակցել և կամ ունենում են խնդիրներ այդ դեպքերում, ցանկանում են յուրովի աչքի ընկնել: Ինչ վերաբերում է թվային տեխնոլոգիաների կիրառմանը, ապա դասը տեխնոլոգիաների կիրառմամբ անցկացնելը նրանց կարողություններն իմ դիտարկմամբ ավելացրեց: Եթե նախկինում հիմնականում ես էի պատրաստում նյութեր և ներկայացնում նրանց դասի ժամանակ, նրանց մնում էր հարցերին պատասխանելն ու մեկնաբանելը, ապա անցկացված 2 դասերի ընթացքում նրանք էին, որ գերազանցապես հանդես եկան դասը թե ներկայացնողի, թե մեկնաբանողի, թե պատրաստողի դերում: Այսպիսով նաև դասերը դարձան աշակերտակենտրոն: Մեղիագործներով դաս անելը նրանց համար չափազանց հետաքրքիր էր, և իրենց պատրաստած նյութերը տպավորություն էր, թե իրենց հաճույք է պատճառում: Խմբերից յուրաքանչյուրը փորձում էր առավել կրեատիվ ու ստեղծարար մոտենալ իր մատուցվող նյութին: Թիմի ներսում նկատելի էին իրար օգնելու ցանկությունը, որևէ խափանման դեպքում խմբի անդամներից մեկը կարողանում էր հիանալի լրացնել իր խմբի անդամին և միասնական ներկայանալն ու իրար հաջորդաբար շարունակելը շատ սահուն էր երևում: Նկատելի էր, որ աշակերտների մոտ ձանձրույթ գրեթե չառաջացավ, քանի որ բոլորին հետաքրքիր էր մյուս թիմերի նյութերը, իսկ ամեն ներկայացնող թիմ իր հերթին պետք է ապահովեր ակտիվ շփում, հարց ու պատասխան դասարանի հետ (սա ևս իմ ցուցումով), ուստի ձանձրանալ գրեթե անհնար էր: Երեխաների մոտ համեմատելու, վերլուծելու, մեկնաբանելու, հարցերին ստեղծագործաբար մոտենալու կարողությունները ևս զարգացան, ավելի լավ կարողացան յուրացնել դասի նյութը:

Աշակերտների առաջադիմության հետ կապված ևս արձանագրումներ կատարվեցին: Եթե նախկինում 3-4 աշակերտներ դասերին կարող էին պասիվ լինել, ապա խմբի ներսում նրանց աշխատանքը ևս տեսանելի էր: Աշակերտ կար դասարանում, ով կաշկանդվում էր արտահայտվել, հուզվում էր և չէր ցանկանում

պատասխանել: Ուրախալի էր նաև այն, որ նրան ևս ակտիվ տեսա, լսեցի նրա պատասխանը, իր պատասխանն անգամ իր համար էր ուրախալի, դասարանի աշակերտները նշեցին, որ նա թիմի հետ շատ ակտիվ է աշխատել: Նրա աշխատանքը ես բարձր գնահատեցի:

Այսպիսով, փորձենք այս հավաքագրած տվյալները աշակերտների արդյունքների հետ կապված վերաձել տոկոսային թվերի: Իմ գնահատմամբ, եթե մինչև այս հետազոտությունը աշակերտների ակտիվությունը 65% էր և ինչ-որ աշակերտներ կարող էին ամբողջ դասին պասիվ մնալ, միայն կոնկրետ իրենց ուղղված հարցերին պատասխանեին, ապա հիմա բոլորի ակտիվ ներգրավվածությունը տեսանելի էր և կարող ենք գնահատել 100%-ով: Եթե դասերը նախկինում այդքան էլ հարուստ չէին մեղիագործիքների կիրառությամբ, ապա մեծացրինք դրանց դերը դասերի անցկացմամբ և դա առավել արդյունավետ էր աշակերտների ընկալման համար, եթե նախկինում այդ ցուցանիշը կարող եմ գնահատել 70%-ով, ապա այժմ այն տատանվում էր 90-95%-ի միջակայքում: Կարող ենք նշել, որ մեր առջև դրված խնդիրների լուծմանը հասանք:

Ամփոփում

Ամփոփելով հետազոտությունը նշենք, որ համաշխարհային պատմության դասավանդման ժամանակ շատ կարևոր է թվային տեխնոլոգիաներով հարուստ դասի անցկացումը: Նախ առաջին հերթին այն պատճառով, որ համացանցը հարուստ է կրթական տարատեսակ նյութերով, որոնք հենց թեմատիկ բնույթ ունեն և վերաբերում են մեր թեմաներին, և դրանք դասին չօգտագործելն ուղղակի կսահմանափակի աշակերտների տեսադաշտը: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտների ոգևորվածությունն էլ ավելի մեծացավ: Աշակերտների նախաձեռնողականությունը ևս բարձրացավ, նրանք ինֆորմացիա ստացողից վերածվեցին ինֆորմացիան մատչելի կերպով ներկայացնողի, բացատրողի, վերլուծողի, ձեռք բերեցին նյութին քննադատորեն վերաբերվելու հատկանիշներ: Կարող ենք հստակ ֆիքսել, որ նրանց մեղիագրագիտության մակարդակը ևս աճեց, քանի որ իրենց նյութը ներկայացնելիս պահանջվում էր նշել նյութի աղբյուրը, հեղինակին, աշակերտները սկսեցին կարևորել պատմության մեջ այդ գործոնը ևս, առհասարակ դրա կարևորությունը առօրյայում:

Կատարած վերլուծության արդյունքում մենք ևս մեկ անգամ համոզվեցինք , թե թվային տեխնոլոգիաների կիրառությունն ինչ դրական արդյունքներ կարող են ունենալ ուսումնական գործընթացում, մանավանդ այն դեպքերում, երբ համաճարակի տարածման հետևանքով կրթությունը դառում է հեռավար, իսկ մեդիագործիքների կիրառումը կրթության շարունակականությունն ապահովելու հիանալի միջոց, ուստի աշակերտները պետք է տիրապեն այդ գործիքներին և զրագետ կիրառեն դրանք ուսումնական պրոցեսում:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Digital learning in schools: What does it take beyond digital technology?
<https://www.sciencedirect.com/science/article/pii/S0742051X21000706>
2. EFFECTIVENESS OF DIGITAL LEARNING SOLUTIONS TO IMPROVE EDUCATIONAL OUTCOMES:
<https://www.unicef.org/media/103246/file/Effectiveness%20of%20digital%20learning%20solutions%20to%20improve%20educational%20outcomes%20-%20A%20review%20of%20the%20evidence.pdf>
3. Literature Review on the Impact of Digital Technology on Learning and Teaching.2015
4. Teacher technology change: How knowledge, confidence, beliefs, and culture intersect
Journal of Research on Technology in Education, 42 (3) (2010), pp. 255-284.
5. <https://journals.sagepub.com/doi/10.3102/0034654315582065>
6. Թովուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ.Ն., Պողոսյան Լ.Մ, Ասատրյան Ս.Մ., Անտոնյան Լ.Ա., Ղազարյան Մ.Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:
7. Ստեփանյան Ռ., Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական գործիքներ, «Մարի» հրատ., Երևան, 2019:
8. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, «Աստղիկ» հրատ., Երևան, 2004:

